

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ  
ԱՎԱՏՐԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ-  
ՊԱՏԳԱՄԱՌԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ**

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ ԱՎԱՏՐԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ  
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ-ՊԱՏԳԱՄԱՌԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ  
(Մայիս 22-23, 1999)**

Ուրախութեամբ տեղեկացանք Աստրալահայոց թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Աղան արքեպս. Պալիօզեանէն, որ Մայիս 22-23-ին (1999) Մելպուռնի մէջ պիտի գումարուի տիրախնամ թեմիդ երեսփոխանական-պատգամատրական ընդհանուր ժողովը:

Հայաստանեայց Եկեղեցին հայ ժողովուրդի հոգւոյն ծննդավայրն է, իսկ Արքութիւն Արքոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ հոգեւոր հաղորդակցութիւնը՝ այդ հոգւոյն կենսունակութեան գրաւականն ու երաշխիքը: Ուստի եւ Միածնաէջ Արքավայրին մէջ կը մնանք աղօթող եւ գործող Հայ Եկեղեցւոյ պայծառութեան, ամաստանութեան, ինչպէս նաեւ անխախտ ու անայլալիքի միութեան եւ միասնութեան համար:

Այսպէս մեր հոգւոյ հայեացքը սեւեռած ձեզ վրայ, լաւատեսութեամբ կը սպասենք, որ դուք՝ ուխտապահ հաւատատրոններդ Հայաստանեայց սրբազնատուրք Եկեղեցւոյ, Սուրբ Հոգիով լեցուած, կարգապահ յանձնառութեամբ նուիրուիք ձեր առաքելութեան՝ աներեր եւ անշփոթ, Աստուծոյ փառքին եւ մեր սիրելի ժողովուրդին բարիքին համար:

Անսասան կանգնած մեր նախնեաց լոյս հաւատքի ապառաժին վրայ, վճիռ ու անաղարտ պահեցէք մեր ժողովուրդի ոգին՝ իր քրիստոնէական եւ հայկական ազգային արժէքներով, միշտ յառաջընթաց հայեացքով ու տեսիլքով: Այս պէտք է ըլլայ Սփիւռքի տարածքին վրայ գործող հայաբոյն հիմնական ու տեւական մտահոգութիւնը, մշտական ու կայուն մտասեռնումը, գործունէութեան կեդրոնական առանցքը:

Սուրբ Էջմիածնէն եւ Մեր սրտէն ձեզի կ'ուղղենք Մեր հայրական սիրոյ ողջոյնն ու օրհնութիւնը՝ լիակատար յաջողութիւն մաղթելով ձեր հոգեշէն աշխատանքներուն՝ հոգեւոր, կրօնական, եկեղեցական, դաստիարակչական եւ ընկերային մարզերուն մէջ: Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ շէն ու լուսառատ պահէ ձեր աղօթքի տունները, որ անփորձ ու

անվտանգ, մեկ ու ամբաստան պահե համայն հայ հաստատացեալ ժողովուրդն  
յԱստրալիա:

Թող Աստուած նոր ներշնչումներ շնորհե ձեզի ամենքիդ, որպէսզի միշտ  
պայծառ մնայ մեր Սուրբ Եկեղեցին աշխարհի յորս ծագերուն մէջ:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, գորացարուք,  
ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13-14). Ամեն:

## ԳԱՐԵԳԻՆ Ա

### ԿՅԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

15 Մայիս 1999